

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀՀ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՑՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի (այսուհետ՝ Բաժին) կանոնադրությունից և պայմանավորված է մասնավորապես գերատեսչությունների հաշվետվողականության ու թափանցիկության շուրջ ՀՀ կառավարության որդեգրած ծրագրային սկզբունքներով, ինչպես նաև Բաժնի գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ:

Բաժնի աշխատանքային ռեսուրսներն ամբողջությամբ ներգրավված են հետևյալ աշխատանքներում՝

- Կոմիտեի բարեփոխումների և կարևոր ծրագրերի պարբերական լուսարանում,
- համակարգի ցանկացած ստորաբաժանումում նոր տեխնոլոգիաների ներդրման, սպասարկման որակը բարելավող միջոցառումների մասին տեղեկատվության արագ տարածում,
- հանրության լայն շրջանակների կողմից կադաստրի թիրախային հարցերի վերհանում, դրանց շուրջ մատչելի տեղեկատվության նախապատրաստում, տարածում,
- Կոմիտեի լավագույն ծրագրերի շուրջ կարճ տեսահոլովակների պատրաստում և տարածում,
- լրատվամիջոցների ներկայացուցիչների ուղղած հարցերին և հրապարակումներին օպերատիվ արձագանք,
- Կոմիտեի ղեկավարների և այլ աշխատակիցների հետ հարցազրույցների, հեռուստառադիոհաղորդումների հյուրընկալվելու ձևաչափերի պայմանավորում և նախապատրաստում,
- ասուլիսների, Կոմիտեի պաշտոնյաների, փորձագետների, այլ մասնագետների հետ հանդիպումների կազմակերպում,
- լրատվամիջոցների համար տեղեկատվական նյութերի նախապատրաստում և տարածում էլեկտրոնային փոստով,
- Կոմիտեին կամ առանձին աշխատակիցներին վերաբերող հրապարակումների ամփոփում,

- Կոմիտեի պաշտոնական կայքի և սոցեջերի վարում, դրանց հաճախակի թարմացում նորանոր տեղեկատվական նյութերով. լուրեր, պաշտոնական հաղորդագրություններ, լուսանկարներ, տեսանյութեր, գրաֆիկա, քարտեզներ,
- համակարգի աշխատակիցներին ներկայացնող առանձին պարբերական շաբթի վարում,
- առավել արդյունավետ PR ծրագրերի մշակում և կիրառում,
- պաշտոնական գրագրության վարում և Բաժնին տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ գրավոր հաշվետվությունների, զեկուցագրերի ներկայացում:

Այս աշխատանքների գերակշիռ մասը մինչև 2018 թվականի աշուն երբևէ չի իրականացվել Բաժնում կամ Կադաստրի կոմիտեի որևէ այլ օղակում: Մինչդեռ դրանք անհրաժեշտ են՝ հանրությանը բազմակողմանիորեն և լավագույնս ներկայացնելու գերատեսչության, նրա սպասարկման գրասենյակների և մյուս ստորաբաժանումների, «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի գործունեությունը:

Այս նպատակի իրականացումը դժվարացնում է Բաժնում ընդամենը մեկ աշխատակցի առկայությունը: Այլ բաժիններից կամ վարչություններից ևս մեկ քաղծառայող Բաժնում ներգրավելը նպատակահարմար չէ, քանի որ որակյալ աշխատանքի և Կոմիտեի որդեգրած մասնագիտական բարձր պահանջներն ապահովելու համար անհրաժեշտ է ոլորտի մասնագետ փորձագետ, որը հնուտ է նաև թվային տեխնոլոգիաների լրատվության ու սոցմեդիայի ոլորտներում, և որն, ի լրումն այս ամենի, Բաժնի նյութերը կապպիովի հեղինակային պրոֆեսիոնալ լուսանկարներով:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Նախատեսված աշխատանքը իրականացնելու նպատակը Կոմիտեի գործունեությունն ավելի ու ավելի շատ մարդկանց ճանաչելի դարձնելն է, նրա ծրագրերն ու տեսակետները հանրության ավելի ու ավելի լայն շրջանակների հասցնելը. այսինքն, Կոմիտեի պաշտոնական կայքի և սոցցանցային էջերի թիրախային, մշտական և հավանական լսարանների ավելի ու ավելի ընդլայնումը:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիրը կնքվու պահից սկսած մեկ տարի ժամկետով:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Նշվածն իրագործելու համար անհրաժեշտություն է առաջանում կատարելու փորձագիտական աշխատանք, որի հիմնական ուղղություններն են՝

- թիրախային, մշտական և հավանական լսարանների դիտարկում, դրանք ընդլայնելու գաղափարների և լուծումների իրագործում,
- միջոցառումների, աշխատանքային պահերի, գրասենյակների, աշխատակիցների լուսանկարում, լուսանկարների մշակում, տարբերանշանով տեղադրում,
- տրված տվյալների հիման վրա գրաֆիկական պատկերների կազմում,
- Կոմիտեի սոցիալական ցանցերի էջերի համար նյութերի պատրաստում և տեղադրում:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել կիսամյակային կտրվածքով, յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 20-ը:

6. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքների գնահատման չափանիշներն են.

- թիրախային, մշտական և հավանական լսարանների աստիճանական ընդլայնում,
- լուսանկարում, դրանց թվային մշակում, Կոմիտեի տարբերանշանով տարածում,
- գրաֆիկական պատկերների կազմում,
- սոցիալական ցանցերի էջերի պարբերական թարմացում նոր նյութերով,
- հաշվետվությունների մշակում:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են՝

- ՀՀ քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- իր լիազորություններին վերաբերող անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն,
- անհրաժեշտ ծրագրային փաթեթների կիրառման հմտություն,
- տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,
- թիմային աշխատանքի ունակություն,

- հաշվետվություններ, փաստաթղթերի կազմելու և ներկայացնելու ունակություն,
- քանակցություններ վարելու կարողություն,
- փոփոխությունների կառավարում,
- ժամանակի կառավարում:

8. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Փորձագետը Կոմիտեին տրամադրվող փորձագիտական ծառայությունների շրջանակում պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները.

Ռազմավարության մշակում

- Կոմիտեի թիրախային, մշտական և հավանական լսարաններն ընդլայնելու գաղափարների մշակում, գործիքների նախապատրաստում,
- լսարանի հետազոտում և վերլուծություն,
- լսարանն ընդլայնելու գործիքների առաջարկում:

Ամենօրյա աշխատանքում

- ըստ օրվա նյութերի՝ Կոմիտեի կայքի և սոցեջերի լսարանի ընդլայնման կամ նեղացման միտումների արձանագրում,
- Կոմիտեի սոցիալական ցանցերի էջերում նյութերի տեղադրում, տարածում, անհրաժեշտության դեպքում՝ մեկնաբանում,
- լսարանն ընդարձակող գործիքների կիրառում,
- միջոցառումների, աշխատակիցների, տարածքների լուսանկարում, մշակում և Կոմիտեի տարբերանշանով տարածում,
- գրաֆիկական պատկերների պատրաստում և տարածում Կոմիտեի սոցիալական ցանցերի էջերում: